ՀՔԱ Վանաձորի գրասենյակը փնտրում է վեբ կայքերի ստեղծման և մշակման փորձ ունեցող SS կազմակերպություն՝ ՀՔԱՎ-ի պաշտոնական կայքի ստեղծման համար:

Դիմելու համար անհրաժեշտ է SS կազմակերպության պորտֆոլիոն և գնային առաջարկը ուղարկել hr@hcav.am, it@hcav.am էլ. հասցեին՝ թեմա դաշտում նշելով «ՀՔԱՎ կայքի ստեղծում» անվանումը:

Դիմելու վերջնաժամկետը՝ **օգոստոսի 26**: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 077342268 հեռախոսահամարին կամ գրել it@hcav.am էլ.հասցեին:

1. Թիրախային լսարան

- Շահառուներ+
- Լրատվամիջոցներ և լրատվամիջոցների ներկայացուցիչներ
- Միջազգային կազմակերպություններ, դեսպանություններ/կայքէջը լինելու է երկլեզու՝ հայերեն և անգլերեն
- Իրավապաշտպաններ և ակտիվիստներ, հասարակական կազմակերպություններ
- Մարդու իրավունքներով հետաքրքրված լայն հասարակություն

2. Ֆրոնթենդ

- Responsive layout - այն պետք է լավ աշխատի բոլոր չափերի էկրանների վրա
- Կայքը պետք է հնարավորություն տա մուգ թեմայի՝ Dark Mode-ի անցման
- Կայքը պատրաստող թիմից պահանջվում է մշակել հարմար UI/UX, հատկապես հիմնական նավիգացիան վերափոխելու համար
- Կայքում պետք է ինտեգրվի առկա WordPress կայքի բովանդակությունը
- Կայքը պետք է համապատասխանի մատչելիության չափանիշներին՝ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար
- Կայքը պետք է հնարավորինս արագագործ լինի՝ ավելորդ CSS/JavaScript-ից խուսափելու, քեշավորման, ներբեռնվող պատկերների և այլ ռեսուրսների օպտիմիզացիայի միջոցով

3. Բեքենդ

- Կայքի ենթակառուցվածքը պետք է հիմնված լինի արդիական և անվտանգ տեխնոլոգիաների վրա և հնարավորություն տա իրականացնել անվտանգության թարմացումներ
- Կայքում պետք է նվազագույնի հասցվեն հղումները արտաքին ռեսուրսների և plugin-ների

4. Ֆունկցիոնալություն

- Լրահոս(նյուզֆիդ)
- Փակել մեկանաբանության հնարավորությունը ամբողջ կայքում
- CMS-ը պետք է հնարավորություն տա ստեղծել տարբեր մակարդակի օգտատերեր, նվազագույնը՝ ադմին, խմբագիր
- Որոնում կայքում բանալի բառերով
- Կայքը պետք է լինի երկլեզու՝ հայերեն և անգլերեն, հավելյալ լեզուներ ավելացնելու հնարավորությամբ
- Ռեսուրսների բաժին խոցելի խմբերի համար (տեղեկատվական, ուսուցողական)
- Դոնորների համար հատուկ բաժին
- Ծրագրերի և համագործակցությունների մասին բաժիններ
- Կամավորության հայտերի ներկայացման բաժին
- Նյութերի մեջ ինտերակտիվ աղյուսակների և չարթերի, քարտեզների և նկարների տեղադրման հնարավորություն
- Նյութերի մեջ հարցումների տեղադրման, պատասխանների հավաքագրում (անոնիմության հնարավորություն)
- Փաստաթղթերի ինտերակտիվ վյուեր (անիմացված էջերի թերթել)

5. Հատուկ ֆունկցիաներ

- Մարդու իրավունքների խախտումների ինտերակտիվ քարտեզ
- Խախտումների մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու պաշտպանված ձև
- Հատուկ բաժին լրատվամիջոցների համար

6. SEO և վերլուծություն

- Օպտիմալացնել որոնողական համակարգերի համար
- Ինտեգրում սոցիալական ցանցերի հետ
- Ավելացնել վերլուծության գործիքներ՝ հաշվի առնելով օգտատերերի գաղտնիությունը
- Պահպանել հին կայքի SEO

7. Փաստաթղթավորում

- Պատրաստել ուղեցույցներ և փաստաթղթեր ադմինների և օգտատերերի համար
- Ստեղծել կայքի թարմացման և սպասարկման ուղեցույց

8. Հին կայքի ինտեգրում

- Տեղափոխել բոլոր գոյություն ունեցող հոդվածները և էջերը
- Պահպանել URL-ների կառուցվածքը SEO-ի համար
- Ապահովել հին հղումների վերահասցեագրում-redirect

Կայքեր որպես ռեֆեռենս

https://www.hrw.org/

Ներկայիս կայքը՝

https://hcav.am/